# Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ փոփոխություններ և 405-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին

**Նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**2018 թվականի N -Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 404-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» N 404-Ն որոշման 1-ին կետով սահմանված N 1 հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխու-թյունները.

1) հավելվածի 18-րդ հոդվածի անվանման մեջ «սուր» բառը հանել.

2) հավելվածի 38-րդ հոդվածի անվանման մեջ «ջլերի ու հոդերի քրոնիկական» բառերը փոխարինել «ջլերի և հոդերի» բառերով.

3) հավելվածի 39-րդ հոդվածի «գ» կետի 2-րդ սյունակում «՝ առանց ֆունկցիայի խանգարման» բառերը հանել.

4) հավելվածի 62-րդ հոդվածի «բ» կետի 2-րդ սյունակում «80» թիվը փոխարինել «81» թվով.

5) հավելվածի 70-րդ հոդվածի «բ» և «գ» կետերի՝

ա. 4-րդ սյունակներում «Ոչ պիտանի է ՌՈՒՀ-ում ուսանելու համար» բառերը փոխարինել «Պիտանի է ՌՈՒՀ-ում ուսանելու համար» բառերով,

բ. 5-րդ և 6-րդ սյունակներում «Ոչ պիտանի է զինվորական ծառայության համար*» բառերը փոխարինել «Պիտանի է զինվորական ծառայության համար» բառերով.

6) հավելվածի 73-րդ հոդվածի՝

ա. «ա» կետի 2-րդ սյունակում «ֆունկցիայի արտահայտված» բառերը փոխարինել «ֆունկցիայի չափավոր արտահայտված» բառերով,

բ. «բ» կետի 3-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պիտանի է զինվորական ծառայության համար».

7) հավելվածի 18-րդ հոդվածի բացատրական մասի առաջին պարբերությունում «սուր» բառը հանել.

8) հավելվածի 21-րդ հոդվածի բացատրական մասի 1-ին և 2-րդ աղյուսակների 2-րդ սյունակներում «ՖԶԻ 18,5-43,7» բառերը փոխարինել «ՖԶԻ 18,5-19,4» բառերով.

9) հավելվածի 26-րդ հոդվածի բացատրական մասի յոթերորդ պարբերությունում «(3 կոմպլեքս և ավելի (հաճախակի էպիզոդները) 5 և ավելի)» բառերը փոխարինել «(3 կոմպլեքս (և ավելի) 5 էպիզոդ (և ավելի))» բառերով.

10) հավելվածի 30-րդ հոդվածի բացատրական մասի տասնվեցերորդ պարբերության երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Բիլիռուբինեմիայի այն դեպքերում, երբ արյան մեջ անուղղակի բիլիռուբինը կայուն 40 մկմոլ/լ-ից ավելի է, զորակոչիկները  փորձաքննվում են «դ» կետով, իսկ շարքային կազմի ժամկետային պարտադիր զինծառայողները փորձաքննվում են «բ» կետով։».

11) հավելվածի 36-րդ հոդվածի բացատրական մասի՝

ա. յոթերորդ պարբերությունը հանել,

բ. իններորդ պարբերությունում «, ընդ որում, 21-23 աստիճանի դեպքում

առաջին անգամ փորձաքննվելիս՝ զորակոչիկին տրվում է տարկետում)՝ աննշան արտահայտված անատոմիական փոփոխություններով (ներառյալ՝ սահմանափակ ձևախեղող սպոնդիլոզը» բառերը հանել,

գ. տասներկուերորդ պարբերությունում «երկու անգամ՝ 1-ական տարով» բառերը փոխարինել «մեկ անգամ՝ մեկ տարով» բառերով.

12) հավելվածի 39-րդ հոդվածի բացատրական մասի՝

ա. առաջին պարբերությունում ««գ» կետին» բառերը փոխարինել ««բ» կետին» բառերով,

բ. երկրորդ պարբերությունում ««դ» կետին» բառերը փոխարինել ««գ» կետին» բառերով.

13) հավելվածի 84-րդ հոդվածի բացատրական մասի երրորդ պարբերությունը հանել.

14) հավելվածի 89-րդ հոդվածի բացատրական մասի հինգերորդ պարբերության առաջին նախադասությունում «Կարգի 20-րդ,» բառերը փոխարինել «Ցանկի 20-րդ կամ» բառերով,

15) հավելվածի 90-րդ հոդվածի բացատրական մասի 1-ին ենթակետում «(բաց տեղամասերում 4% և ավելի, փակ տեղամասերում 6% և ավելի)» բառերը փոխարինել «(բաց տեղամասերում 4 սմ$^2$ և ավելի, փակ տեղամասերում 8 սմ$^2$ և ավելի)» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 405-Ն որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին կետով սահմանված N 1 հավելվածի՝

ա. 20-րդ կետի 1-ին ենթակետում «բժշկական զինկոմիսարիատներում» բառերը փոխարինել «զինվորական կոմիսարիատներում» բառերով,

բ. 46-րդ կետում «Առողջական վիճակի զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված պատճառով» բառերը փոխարինել «Առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված» բառերով,

գ. 86-րդ կետում «ՀՌԲՀ-ի, ԿՊ ՌԲՀ-ի ներկայացմամբ՝» բառերը փոխարինել «ՀՌԲՀ-ի կամ ԿՊ ՌԲՀ-ի կամ» բառերով,

դ. 106-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«106. Զինվորական ծառայության ընթացքում ԿՌԲՀ-ի եզրակացության համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկի առնվազն հինգ հոդվածով «սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար» ճանաչված շարքային կազմի պարտադիր զինծառայողները հետագա ծառայությունը շարունակում են հեշտացված օրվա կարգացուցակով։»,

ե. Ձև N 10-ում «ՀՀ ՊՆ ԿՌԲՀ» հապավումները փոխարինել «-------- ՌԲՀ» հապավմամբ.

2) որոշման 2-րդ կետով սահմանված N 2 հավելվածի՝

ա. 4-րդ գլխի 2-րդ կետի 2-րդ ենթակետում «17 մմ և ավելին» բառերը փոխարինել «21 մմ և ավելի» բառերով.

բ. 5-րդ գլխի 1-ին կետը լրացնել 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ և 32-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«28) Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ

29) Երևանի կայազորային հոսպիտալ

30) Լոռու կայազորային հոսպիտալ

31) Զանգեզուրի կայազորային հոսպիտալ

32) Գեղարքունիքի կայազորային հոսպիտալ»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: